


ԵՐԵՎԱՆ-ԱՄՍՏՐԱ ՎԱՐՎԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Posted on January 15, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Հեղինակ՝ Կարեն Միքայելյան, Հրապարակախոս, Մոսկվա, Հունվար 2010

Հայ - Թուրքական Հարաբերություններ Զեն

Թուրքիայի Հանրապետությունը ներկայացնում է թուրք ժողովրդին և խոսում նրա անունից: Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) չի ներկայացնում համայն հայությանը, այլ ներկայացնում է միայն ՀՀ-ն բնակչությանը և կարող է հանդես գալ միայն նրա անունից, ինչպես արտոնում է ՀՀ-ն սահմանադրությունը, ըստ որի նրա իրավասությունները տարածվում են մոտ եռեսուն հազար քվ տարածքի և մոտ երեք միլիոն բնակչության վրա:



Հեղինակ՝ Կարեն Միքայելյան, Հրապարակախոս, Մոսկվա, Հունվար 2010

Հայ - Թուրքական Հարաբերություններ Զեն

Թուրքիայի Հանրապետությունը ներկայացնում է թուրք ժողովրդին և խոսում նրա անունից: Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) չի ներկայացնում համայն հայությանը, այլ ներկայացնում է միայն ՀՀ-ն բնակչությանը և կարող է հանդես գալ միայն նրա անունից, ինչպես արտոնում է ՀՀ-ն սահմանադրությունը, ըստ որի նրա իրավասությունները տարածվում են մոտ եռեսուն հազար քվ տարածքի և մոտ երեք միլիոն բնակչության վրա:



Այս թյուրիմացության սկզբնախբյուրներից է նաև ՀՀ Սահմանադրությունը, որի պրեամբուլում սևով սպիտակի վրա գրված է. «Հայ ժողովուրդը ընդունում է ՀՀ-ի Սահմանադրությունը»: Հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը որևէ առնչություն չի ունեցել ՀՀ-ի Սահմանադրության ընդունման հետ: Խոսքը կարող է գնալ միայն ՀՀ-ի բնակչության մասին: Սա մոտավորապես նույն մտածելակերպի և գործելակերպի արդյունքն է ինչպես 1919 թ., երբ ՀՀ-ի իշխանությունները շտապելով այն վերակոչեցին «Ազատ Անկախ Միացյալ Հայաստան», իսկ դրանից առաջ Անդրկովկասում 12 հազ. քվ տարածքի վրա դրեցին «Հայաստան» անվանումը, երբ համեստ, իրատես, բովանդակալից և քաղաքականապես հեռատես կլիներ անվանել «Արևելյան Հայաստանի Հանրապետություն»: Նույն (ան)տրամաբանությունը կրկնվեց 1991 թ.-ին: Երբ հայերը վերականգնեցին իրենց պետականությունը Միջերկրականի ափերին այն ընդամենը համեստորեն անվանեցին Կիլիկյան հայկական պետություն: Նման մոլորությունը շարունակվեց Խորհրդային ժամանակներում, երբ Ստալինը հայտարարեց, որ Հայկական հարցը ըմբամիշտ լուծել են բոլշևիկները, Խորհրդային

Հայաստանը հռչակելով «միակ հայրենիքը համայն հայության»: Հիմք դնելով երևանակենտրոն մտածողության, առողջ և հիմնավորված ռուսամետությունը փոխարինելով կույր խորհրդամետությամբ, առաջացավ միջհայկական հակամարտությունը, հատկապես Սառը Պատերազմի ժամանակ, որ մինչև հիմա վերջնականապես դեռ չի հաղթահարված:

Հայ ժողովուրդի, Համաշխարհային Հայության միայն մեկ երրորդն է ՀՀ-ն քաղաքացի, մյուս մասը հայկական Սփյուռքն է, տարագիր հայությունը, որ հիմնականում հետևանք է Մեծ Եղեռնի, Արևմտյան Հայաստանի հայաթափման, անընդմեջ կոտորածների, դեպորտացիաների: Նախկին Օսմանյան կայսրության կենդանի մնացած հայ քաղաքացիների ժառանգներն, արևմտահայերը, որ այսօր աշխարհում (այդ թվում և ՀՀ-ում) հաշվում են մոտ յոթ միլիոն մարդաքանակ, ունեն իրենց յուրահատուկ շահերը, իրավունքները, պահանջատիրությունը: Հառց Ցեղասպանության լիարժեք դատապարտումը, ում և ուր ինչպիսի մեղադրանք և ինչ պահանջներ ներկայացնելը Արևմտահայության Լիազոր Ներկայացուցիչ Մարմինների գործն է, երբ նրանք կհիմնադրվեն, մոտ ապագայում, Արևմտահայերի Ազգային Համագումարում, Փարիզում (Սեվրում), որը նախապատրաստվում է այդ նպատակով ստեղծված Միջազգային Կազմակերպչական Կոմիտեի կողմից:

Շատերը, թե ՀՀ-ում, թե Սփյուռքում, շփոթության մեջ են, երբ ՀՀ -ն իշխանությունները բանակցություններ են վարում առանց նախապայմանների Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու համար: Կա սխալ ընկալում, իբր ՀՀ-նը կարող է հանդես գալ համայն հայության անունից, հետապնդել համահայկական նպատակներ, հանդես գալ արևմտահայության անունից և համապատասխան պահանջներ ներկայացնել Թուրքիային:

ՀՀ-նը կարող էր դա անել, եթե նա վերահաստատեր (ևոր սահմանադրությամբ) իրավահաջորդությունը 1918 – 1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետությունից, տեր կանգներ և վերակենդանացներ Սեվրի դաշնագիրը, ստանար արեվմտահայերի պահանջների լիազորությունները: Այդպես էր 1919 ին, երբ Հայաստանի Հանրապետության իշխանական կառույցների շրջանակներում իրենց խնդիրները լուծելու նպատակով Արևմտահայերի Երկրորդ համագումարի փետրվարի 13 -ի նիստում ստեղծված գործադիր մարմնի ընտրած 12 արեվմտահայ պատգանավորներ տեղ ունեցան Հայաստանի Հանրապետության խորհուրդում:

Եվ եթե ՀՀ – ն դա չի անում, պահանջներ չի ներկայացնում Թուրքիային, նույնիսկ Կարսի նկատմամբ, և Ադրբեջանին Նախիջեվանի նկատմամբ, կամ Վրաստանին Ջավախքի նկատմամբ ապա այդ պետք է դիտել իբրև գիտակցված և հիմնավորված գերագույն զիջում ՀՀ -ն իշխանությունների կողմից: Նրանց կողմից այդպիսի զիջում կարելի է ներկայացնել նաև այն, որ պահանջներ չեն ներկայացվում Ադրբեջանին դեռ նրա կազմում գտնվող Արցախյան մնացյալ տարածքների նկատմամբ: Պահանջներ չեն

Ներկայացվում հայ փախստականներին վերադարձնել Ադրբեջան: Պահանջներ չեն ներկայացվում դատապարտելու համար հայերի *գեոնցիդը* Ադրբեջանում:

Այս բոլորը ահռելի զիջումներ են, որոնց վերաբերյալ կարելի է կարծիքներ հայտնել, տարբեր դիրքորոշումներ ունենալ, գիտական քննարկումներ անցկացնել: Բայց իրողությունը այս է, ՀՀ-ն այսօրվա իշխանությունների վարած քաղաքականությունը այսպիսին է: Եվ պետք է իրատեսորեն գնահատել, թե ինչու է այսպես, և որ դեպքում կարող է ուրիշ լինել: Կա արդյոք մեկ ուրիշ այլընտրանք, այլ քաղաքական մտածողություն, ուրիշ ուղղություն և քաղաքական ուժ: Անհրաժեշտ է որ հասարակայնորեն քննարկվեն, որ զիջումներն են պատճառաբանված, ընդունելի և արդար, որը ոչ:

Ակնհայտ է, որ Երևանում առայսօր ուրիշ լուրջ, իրական, գործունյա ուժ, բացի իշխանությունից և նրա Հանրապետական կուսակցությունից չկա: Եվ դժվար էր հուսալ որ ավելին կարող էր լինել, նկատի ունենալով այն իրադարձությունները, պայմանները, ճանապարհը, որ անցել է հայությունը, հատկապես նրա խորհրդային հատվածը: Լիարժեք քաղաքացիական հասարակարգի ձևավորումը դեռ ժամանակ է պահանջում: Փառք Աստծո, որ այսքանն էլ հաջողվեց պահպանել, որ բավարար եղավ անկախության գործընթացը կառավարելի դարձնել (շատ կորուստների հետ հանդերձ) և նույնիսկ պատերազմ չահել հաղթանակի ճանապարհին, բայց և որ լրիվ հաղթանակը դեռ առջևում է: Սփյուռքում թերևս ավելին կարող էր լինել, կազմակերպվածության և հատկապես քաղաքական մտածողության ասպարեզում: Կան պատճառներ, բայց արդարացում չկա, որ մինչև հիմա Սփյուռքում քիչ թվով կան հայազգի քաղաքական, պետական գործիչներ, դիվանագետներ, միջազգային իրավաբաններ, բանկիրներ և այլն, որոնք ներգրավված են ազգային կյանքում: Հիմնականում գոյատևման բարդույթն է դեռ գերակշռողը:

Հաղթանակը կարելի է կռել միայն միացյալ ուժերով: Այնինչ առայժմ պատերազմում է հայության միայն մեկ երրորդը այնպես, ինչպես կարող է:

1914-1918թթ., 1920-21 թթ. պարտությունների դասերը դեռ լրիվ չեն գիտակցված, դեռ գերակշռում են առասպելները և խեղաթյուրումները: Հայոց Մեծ Եղեռնը, 1921 թ. ՀՀ-ն կործանումը, 1991 թ. Բաքվի, ադրբեջանահայության հայաթափումը և այլն անխուսափելի չէին: Մեր պարտություններում մեր մեղավորության չափի ուրացումը - կործանար է: Դատապարտվածության և անելանելիության, «մեր սև բախտի» բարդույթը դեռ իշխում է:

Համայն հայության մասնակցությունը հայկական պետականության վերկանգման գործընթացին աննշան է: Այն օգնությունը, որը գալիս է դրսից, հատկապես Ռուսաստանից, որի հետևանքով հազարավոր ընտանիքներ ՀՀ-ում և Արցախում գոյատևում են, տարերային բնույթ է կրում, և որոշիչ նշանակություն չի կարող ունենալ

պետության տնտեսության, քաղաքականության, դիվանագիտության և ամենակարևորը ռազմական հզորացման գործում: Այդ գործին լիարժեք մասնակից կարող է լինել միայն համապատասխան կերպով վերակազմավորված հայկական Սփյուռքը, միակ իրական և եական ռեսուրսը Հայության: Այսօրվա դրությամբ դրա պատկերը ներկայացնում է «Հայաստան» հիմնադրամը, որի տարեկան օժանդակությունը ընդամենը մի քանի միլիոնի է հասնում: Այնինչ պետք է լինի մի քանի միլիարդ: Եվ կարող է, պարտավոր է որ լինի, եթե հրամայական անհրաժեշտություն է, որ հայության մեծ և կարևոր հատվածը կատարի իր պատմական առաքելությունը, մասնակցությունը բերի Հայրենիքի վերաստեղծման սուրբ գործընթացին: Այն գործընթացին, որ Կիլիկյան հայկական թագավորության վերջավորումից հետո առաջին առիթը կորցրինք անցյալ դարի սկզբին:

Կարո՞ղ է արդյոք Հայությունը այս երկրորդ ստեղծված առիթը չկորցնել, որի առաջացմանը հայերը չեն մասնակցել, որին նախապես չեն պատրաստվել, և պահանջվում է ստեղծված իրավիճակում, ընթացքում հարմարվել, ուժ ստեղծել, պայքարել, հաղթանակել:

Այս իրավիճակում, այս ուժերով, ոգեղեն և նյութական, ի՞նչ կարող ենք հասնել, ի՞նչ պահպանել, ի՞նչ և ի՞նչպես զարգացնել, ի՞նչ ուժ և կորով կարող են հայերը ցուցաբերել, որպեսզի այլևս չլինեն նոր պարտություններ, նոր կորուստներ: Տեսնելով հայերի համընդանուր վիճակը, - ազգային համերաշխության աաստիճանը, կազմակերպվածությունը, մարտունակությունը, դիմադրողականությունը, մրցունակությունը - հիմնական բնագավառներում - եղած ոգին, կամքը, ուժը, - տարվող բանակցություններում հայկական կողմին փորձում են ստիպել գնալ նոր զիջումների:

Նոր զիջումներ սպասելը հայկական կողմից, հատկապես Ղարաբաղյան հակամարտության բանակցությունների ընթացքում,- որտեղ հայերը ոչ միայն արդար են, այլ և հաղթանակած, (ի տարբերություն հայ - թուրք հարաբերություններում, ուր արդար էինք, բայց ոչ միշտ ճիշտ և պարտված ենք) - անօրեն է, անիրական է, անբարոյական է, կարող է լինել ճակատագրական, կործանարար: Ավելին: Բանակցություններ վարելը Ադրբեջանի հետ Արցախի կարգավիճակի կապակցությամբ - պատճառաբանված չէ, անիմաստ է և անարդյունավետ: Նրա հետ բանակցություններ կարելի է վարել միայն հարաբերություններ հաստատելու կապակցությամբ, պայմանով, որ նա ընդունի կայացած իրավիճակը իբրև անվերականգնելի իրականություն, փաստ և հրաժարվի իր անօրեն և անիրականալի պահանջներից:

Ադրբեջանը հայկական տարածքներ չի գրավել: Այդ տարածքները - Արցախը և Նախիջևեվանը - գրավվել են խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի կողմից և հանցագործ կերպով հանձնվել են Ադրբեջանին 1921 թ. Կովբյորոյի տխրահռչակ անօրեն վորոշումներով: **Երբ խորհրդային բանակը հեռացավ Ադրբեջանից ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Ադրբեջանը, զրկվելով Կրեմլի հովանավորությունից, պարտություն**

Կրեց իր իսկ կողմից սկսած պատերազմում և հայերը մասամբ ազատագրեցին զավթված հայկական տարածքները:

Ժամանակակից հայ ազգային քաղաքական մտածողության պակասի հետևանքը չէ՞ր արդյոք, որ ի հակադրումն «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի համատեղ որոշմանը, ի հակադրումն 1991 թ. սեպտեմբերի 25-ի Հայաստանի անկախության հռչակագրի, Հայաստանի տարածքային ամբողջականության վերկանգման գործընթացը վերափոխվեց «Ղարաբաղի հայերի ինքնորոշման» խնդրով, Արցախում երկրորդ հայկական պետության ճանաչման թույլ և անհեռանկարային հարցով: Այս մետամորֆոզը, պարտվողական (իբր խորամանկ, բայց իրականում վախկոտ) մտածելակերպը և գործելակերպը ներկայացվում է ՀՀԾ-ից ժառանգած իբրև իրատես քաղաքականություն: Այս հայեցակարգի վրա հիմնված բանակցությունները հակառակորդի դաշտում տանում են փակուղի, երբ Բաքուն, օգտվելով սրանից, մոլորացնում է համաշխարհային հանրությանը, խոստանալով «ղարաբաղի հայերին» ամենաընդարձակ ինքնավարություն: Բացի դրանից, այս դիրքորոշումը օգնում է հառակորդին տեսականորեն հիմնավորել պատերազմի միջոցով հարցը լուծելու իրենց իրավունքը: Եթե հարցը ներկայացվում է ոչ թե Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգմանը, որ այդպես է, այլ – Ադրբեջանի, որ այդպես չէ:

Հայկական հարցի (արևելյան և արևմտյան կերպարներով) լուծումը կարող է ավելի անհամեմատ արդյունավետ կերպով հետապնդվել, երբ միջազգային կյանքում կձևավորվի հզոր ինքնուրույն Հայկական Գործոն, որը հնարավոր կդառնա, երբ հայ Սփյուռքը կներկայանա իբրև կազմակերպված ինքնակառավարելի մարմին ի դեմս Արևմտահայերի Լիազոր Ներկայացուցչական Մարմինների (Արևմտահայերի Ազգային Ժողով, Ազգային Խորհուրդ), որը հնարավոր կդարձնի Համաշխարհային Հայության երկու հատվածների միջև աշխատանքի բաժանումը, դերերի բաշխումը, լիարժեք համագործակցության պայմաններում, և որ հնարավոր կլինի այնպիսի համահայկական ծրագրեր մշակել և իրագործել, որ հայ ժողովրդի համար անվտանգ և հեռանկարային զարգացման ապագա կապահովվի:

Կարեն Միքայելյան

vestnicyahoo.com

